Նարեկ Սարգսյան

Նա

Իմ միտքը՝ որպես մի հրաշագործ նկարիչ,

Իմ սրտում ու հոգում վրձնել է

Նրա հեքիաթային չքնաղ պատկերը:

Աչքերս, ալեհավաք դարձած,

Փորձում են ամենուր գտնել նրան,

Բայց նա չկա:

Իմ բյուրեղացած երազանքերի Մ

արմնացումն ու լույսն է նա,

Բայց նրան գտնել չեմ կարողանում,

Կարծես միտքս ու երևակայությունս

Ինձ համար տառապանքի աղբյուր են ստեղծել:

Նրա պատկերը դրոշմված է սրտիս մեջ

Ու նվիրական իմ անուրջներում, Նա և՛ կա, և՛ չկա,

Ե’վ իրական է, և’ մտացածին:

Իրական է նրանով, որ նրան

Արարել է իմ միտքը,

Անիրական՝ նրանով, որ իրական կյանքում

Նրան երբևէ չեմ տեսել:

Միևնույն է, ես արդեն երջանիկ եմ,

Երջանիկ եմ, որ իմ միտքը արարել է

Նրա պես աստվածային էակին՝

Դառնալով արարիչ:

Հավերժ շնորհակալ եմ նրան,

Չէ± որ հենց նրա շնորհիվ,

Կարողացա իմ մեջ բացել ու տեսնել Աստվածայինը:

Մեղրի, 2017 թ մարտի 7